9

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

Մ. ՍԿՈՄՈՐՈՒԽՈՎ.

ՊԼՈՒԺՆԻԿՈՎԻ ԲՐԻԳԱԴԸ

ՀԱՂԹԱԿԱՆ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՌԱՊՈՐՏԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐՈՒՄ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЭКОНОМИКИ
Академии Наук
СССР

338.14
Ս-58

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ռոստով-Դոն 1933

338.14
Ա-58

Ca 34-И / 571

07 FEB 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Մ. ՍԿՈՄՈՐՈԽՈՎ.

ՊԼՈՒԺՆԻԿՈՎԻ ԲՐԻԳԱԴԸ
ՀԱՂԹԱԿԱՆ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՌԱՊՈՐՏԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ռոստով-Դոն 1933

31.07.2013
30784

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածության փոխարեն — բրիգադների ռապորտը . . . 3
Մալիշի և Սկիբայի հանդիպականը 4
Բերքահավաքին պատրաստ ենք 11
Բարեխիղճ աշխատանքով կնվաճենք առաջնությունը . . 14
Հավաքված է մինչև վերջին հասկը 21
Հարվածարիններին — լավ սնունդ 24
Մենք գիտեինք, թե ինչի համար ենք աշխատում . . . 30
Բազրաժնի պետը սովորեցնում է աշխատել 33
Ամեն ինչ հաշվված և նախատեսված է 37
Ջերմն ցույց է տրվում լավ հոգատարություն 38
Հաղթանակի «գաղտնիքը» 41

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ս. ՄԱՍՆԵՑՈՒ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна
56042-66

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

ԲՐԻԳԱԴԻՐԻ ՌԱՊՈՐՏԸ

ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՄԵՐ ԱԹԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆԸ

Տիմաշևսկի ՄՏ կայանի «Զեկիստ» կոլտնտեսության առաջին բրիգադն ոգոստոսի 25-ին ամբողջապես կատարեց պետությանը հաց հանձնելու պլանը։ Հանձնված է աշնանացորեն՝ 1076 ցենտներ, գարի—255 ցենտներ, վարսակ — 79 ցենտներ, գարի՝ յեգիպտացորենի փոխարեն—86 ցենտներ և լուբիա — 21 ցենտներ։ Մինչև սեպտեմբերի 1-ը կալսված է 313 հեկտար։ Մնացած ամբողջ հացը դիզված է։ Հավաքված է 30 հեկտար լուբիա և կաղված է ամբողջ արևածաղիկը, որն այժմ կալսվում է։ Հավաքված է 15 հեկտար գենագերչակ։ Վարված է աշնանացանքի համար 140 հեկտար։

Բրիգադիր՝ ՊԼՈՒԺՆԻԿՈՎ

ՄԱԼԻՇԻ ՅԵՎ ՍԿԻԲԱՅԻ ՀԱՆԴԻՊԱԿԱՆԸ

Հունիսի սկիզբն է։ Ընկ. Պլուժնիկովի բրիգադը վաղուց ավարտել է հասկայինների քաղհանը։ Նա արդեն ավարտում էր նաև արևածաղկի և ճակնդեղի քաղհանը, միաժամանակ քաղելով դեռ ծաղիկներով ծածկված անուշահոտ խոտը և դիզելով նրան։

Հացաբույսերի խիտ պատը, արևածաղկի մաքուր, նոսրացրած բարձր շարքերը, խոտի ավելացող հարթ սանրած դեզերը, — այդ ամենը վոգեվորում էր։ Ավելի ու ավելի ամրանում էր բրիգադի վոգեվորությունը՝ մեկ աշխորին 10 կիլոգրամ հաց ստանալու համար պայքարում։

— Տասը կիլոգրամ։ Այո, մենք մեր վոբակով անպատճառ կավելացնենք այդ կիլոգրամների քանակը, — ասում էին առաջավոր կոլտնտեսականները։ Եվ ճիշտ վոր բրիգադային մրցման տախտակն որ որի վրա ցույց էր տալիս, վոր որական գծագիրը գերակատարվում է։

Պլուժնիկովցիները յեռանդուն կերպով նախապատրաստվում էին վրա հասնող հնձի ծանր աշխատանքներին։ Բրիգադիր Վասիլի Յեֆիմովիչը հաճախ անցնում էր քաղբաժինը, իսկ հետո արդեն մութն ընկնելուց մինչև ուշ գիշեր մատիտով գրում էր թղթի վրա, դնելով առաջը բրիգադային արտադրական պլանը և ՀԿ (բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի «Ցելը վարելու և հասկայինների բերքահավաքը կազմակերպելու մասին» վորոշումը։

Մեկ անգամ առավոտյան նա հայտնեց կոլտնտեսականներին.

— Այսոր յերեկոյան արտադրական խորհրդակցության ժամանակ մենք խոսելու յենք, թե ինչպես ավելի լավ և արագ ավարտենք հունձը։

Յեվ յերեկոյան բրիգադային իջևանավայրում, կոլտնտեսականները, բոլորվելով սեղանի շուրջը, վորի վրա բրիգադիրը գրել էր վորոշումը պարունակող թերթն ու իր

գրած հաշվաթերթիկները, ուշադրությամբ լսում էին Վասիլի սասածը։

Դեռ թերթն ստանալու որն այդ վորոշումը կարդացվեց բարձրաձայն ճաշի ընդմիջումին, ապա նա փակցվեց բրիգադային իջևանավայրի տախտակին։ Այժմ Պլուժնիկովը չեր կարդում այդ վորոշումը, այլ զեկուցում եր, վոր նա պետք է կյանքի մեջ մտցվի բերքահավաքի և հացամթերումների ժամանակ։

— Վորոշումը պահանջում է, — պարզ կերպով զեկուցում եր բրիգադիրը, — առաջին հնգորյակին հնձել, յերկրորդին՝ կալսել բերելուց հետո և հնձել, իսկ յերրորդին՝ վորպեսզի հացաբույսերը հնձվեն, խուրձ կապվեն և դասավեն փոքր դեզերով մինչև վերջին հասկը, և դրա հետ միասին, կալսվեն և փոխադրվեն ելեվատոր։ Դիպել պետք է հնձելու և կալսելու հետ միաժամանակ, վորպեսզի կալման սկզբից տասը — տասնհինգ որից հետո սկսել կալսել դեզերից։

Ահա նախ և առաջ հիշեցեք այդ, իսկ ապա լսեցեք, թե ինչպես պետք է գլուխ բերել հունձը։

Բերքահավաքի ժամանակ լինելու յե յերեք խումբ։ Ահա, առաջինը՝ զերանդավորները — Ալեքսանդր Մալիշը և Սկիբա Իվան, դուք աշխատում եք ձեզ կցված հնձիչներով և ձիերով։ Նորման — չորս և կես հեկտար է։ Նորմայի համար հաշվվելու յեն մեկ և կես աշխատանք։ Դուք պետք է հնձեք 75 հեկտար աշնանացան ցորեն № 34 վանդակում, 15 հեկտար գարի № 41 վանդակում և 10 հեկտար վարսակ № 42 վանդակում։

Հնձիչների հետևից պետք է բարդեր դնի, հավաքի մինչև վերջին հասկը ձեռքի փոցխերով և կապե բարդերը Անաստասիա Անիսիմովայի խումբը։ Այդ խումբը բաղկացած է վեց հոգուց։ Նրանց ամեն մեկի նորման՝ մեկ և կես հեկտար է, իսկ նորմայի համար հաշվվելու յե մեկ և կես աշխատանք։ Այդ ամբողջ հարյուր հեկտարը հավաքելու յե ձիու փոցխերով Լիդիա Ցիմբելմանը։ Նրա նորման 9 հեկտար է։ Իսկ նորմայի համար հաշվվելու յե մեկ աշխատանք։

Ամբողջ աշխատանքը 10 որվա յե։ Իսկ մի որվա ընթացքում՝ 9 հեկտարից վոչ

պակաս։ Ինձը հեկտարը — առաջին խմբի որակն դծագիրն է։

Այսպես եր իր պլանով վորոշել յուրաքանչյուր խմբի և կոլտնտեսականի համար աշխատանքի տեղն ու առաջադրությունը։ Պլանով համակցված յերրորդ խումբը հնձի վեցերորդ որից, ավարտելով իր հողամասի աշխատանքները, սկսում է կալսումը և հացի անխափան փոխադրումը դեպի ելևատոր։ Իսկ յերկրորդ խումբը հնձից հետո պատասխանատու յեր գիզման համար։

— Յես կարծում եմ, վոր ամեն մեկի համար պարզ է աշխատանքի սկիզբն ու վերջը, տեղն ու առաջադրությունը։ Այնպես վոր բերքահավաքը մենք պետք է ավարտենք 11 որում, կալսումը՝ 27 որում, իսկ հացահատիկի փոխադրումը դեպի ելևատոր և ՄՏ կայանի աշխատանքների վարձատրումը մեր բրիգադը պետք է ավարտի մինչև ոգոստոսի 20-ը։ Ո՞վ, ինչպիսի առարկություններ ունի, — այսպիսի հարցով ավարտեց իր զեկուցումը բրիգադիրը։

— Հնձիչների կոտրվելու դեպքերը նախատեսված են։

— Այո։ Ունենալու յենք պահեստի մասեր։

— Իսկ ձիու փոցխե՞ր։

— Միայն պահեստի փոցխերը։

— Թույլ տուր, Վասիլի, յես արտահայտվեմ, — ձայն խնդրեց Ալեքսանդր Մալիշը։

— Այդ ամբողջ պլանն ինձ համար պարզ է։ Նախատեսված է ամեն ինչ։ Բայց մի բան միայն բաց է թողնված, ինչպես ասում եյին քաղաքաժենցիները, — մեր մարտական տրամադրությունը։ Իսկ յեթե այդ ել հաշվի առնենք, ապա հունձը մենք պետք է ավարտենք վոչ թե ամսնամեկ, այլ ութ որում։ Յես հայտարարում եմ, վոր իմ չորս և կես հեկտարի նորման շատ փոքր է։ Մենք Սկիբայի հետ կտանք վեցից վոչ պակաս և մրցման ենք կանչում գերանդավորների յերկրորդ խմբին և մեր դիզողներին, վորպեսզի նրանք կարողանան մեզ հասնել։

— Միանգամայն ճիշտ է։

— Վեց, վեց։

— Ձե՞ վոր մենք հարվածային բրիգադ ենք, — ամեն կողմից լսվեցին բացականչություններ։ Գերանդավոր Գրիշչենկոյի յելույթից հետո ամբողջ բրիգադը վորոշեց.

— Հնձիչին — վեց հեկտար։ Հունձն ավարտել 8 որում։ Կառավարության առջև ունեցած հաշիվները փակել ոգոստոսին։ Մրցման կանչել կոլտնտեսության մյուս բրիգադներին, մանավանդ յերրորդին, վորպես առաջավոր բրիգադի։ «Կոլխոզնոյե զնամյա» ռայոնական թերթի միջոցով ամբողջ կոլտնտեսության անունից մրցման կանչել «Դնեպրովեց» կոլտնտեսությանը։ Առանձին սոցպայմանագիր կնքել «Դնեպրովեց»-ի 7-րդ բրիգադի հետ։ Բերքահավաքի պլանը տպագրել ռայոնական թերթում։

— Հավաստիացնել քաղբաժնին, վոր մեր խոսքը հաստատ է։ Մենք, Պլուժնիկովցիներս, չենք խայտառակվի։

Հենց այդտեղ ել դիզող Աննա Մալիշը սոցպայմանագիր ձևակերպեց Յոսիֆ Տիշչենկոյի տղամարդկանց խմբի հետ։

ՍՈՑՄՐՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԲԱՐԴԵՐ ԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Մենք, խմբավարուհի Աննա Մալիշի № 1 խմբի կոլտնտեսուհիներս, մրցման ենք կանչում բարդերը լավ դնելու համար խմբավար Յոսիֆ Տիշչենկոյի տղամարդկանց խմբին։

Մեծ բարդերը դնել ճշտապահորեն հասկերը դեպի ներս, լավ, բարդը վերջավորել սուր ծայրով, մինչև վերջին հասկը հավաքել, բարդը լավ ամրացնել։ Աշխատել և գիշերը, բայց նորման կատարել»։

— Չե վոր մենք աշխատում ենք մեզ համար։ Կառուցում ենք մեր կոլտնտեսային ունևոր կյանքը։

ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻՆ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ

Բաղմամարդ եր դարբնոցը և աղմկալից հունիսի 16-ին։ Ընդունվում եր բերքահավաքի վերանորոգված ինվենտարը։ Ընդունիչ հանձնաժողովի հետ եյին նաև կոլտնտեսային բջիջի քարտուղար Բաշտան, խորհրդի նախագահ Ավդեյենկոն, կոլտնտեսության դաշտավար Անդրեյը։ Իսկ կոլտնտեսության նախագահ Զատուլան բրիգադիր Պլուժնիկովի հետ — անպայմանորեն գրանվում եյին նրանց շարքում։

Դարբիններ՝ Պանասյուկը և Բուրլակովը կարծես հարսանիքում լինեն։ Ուրախ կատակում են։

— Մոլիր, մոլիր, դեռ վերցրու, հոտոտիր և համը տես, այն ժամանակ կիմանաս լավ է, թե վոչ, — կատակ են անում Մալիշի վրա, վորն ստուգում է իր լոբոգրեյկան։

Ստուգումից հետո, Մալիշը, Սկիբան, Դրոգալոն և ուրիշները լծեցին ձիերին վերանորոգված հնձիչներին և մի ժամ քշում եյին։

— Լավ են, նույն իսկ պահեստի մասերն էլ պետք չեն։

Մեքենաներն իսկապես վոր լավ եյին վերանորոգված։ Դարբիններն առանձնապես աչքի եյին ընկնում հատիկվորսիչների վերաբերմամբ իրենց ունեցած հնարամտությամբ։

Առանձին բան չկա հատիկվորսիչների մեջ. նա առաջ ու հետ շարժվող հատակ ունեցող մի արկղ է, մեջտեղից բաժանված պատով։ Բայց նա ամբողջապես արդարացնում է իր կոչումը։ Հացահատիկները հարվածներ լինելու դեպքում չեն

թափվում — բռնվում են տախտակով։ Փոցխերը չեն ճանկում։ Մինչև վերջին հատիկը բռնում են այդ հատիկվորսիչները։ Միայն Ջոկիր ճշտապահորեն։

— Այո, շատ խելոք տղերք ունես, Վասիլի, — ասաց «Դնեպրովեց»-ի 7-րդ բրիգադի բրիգադիր Կրիվորուչկոն, վորն յեկել եր նայելու, թե ինչպես է նախապատրաստվում ինվենտարը Պլուժնիկովի մոտ։ — Քո հատիկվորսիչները հարյուր տոկոսով են, մերոնց պես չեն։ Այնպես վոր յես տեղ մոտ եկ քո ձևով կշինեմ։

— Ճիշտ ես ասում, Կրիվորուչկո, — ասաց «Դնեպրովեց» կոլտնտեսության բջջի քարտուղար Գապիչը, վորը նրա հետ միասին յեկել եր Պլուժնիկովի մոտ։ — Պլուժնիկովի հատիկվորսիչների ունեցած լավ փորձը վոչ միայն պետք է ընդորինակել, այլ և մեր բոլոր հնձիչները պետք է վերաշինել այդ ձևով։

Դարբինները լսում եյին և ժպտում, իսկ առավոտյան գրում եյին.

«ՊԵՄՑԵՏ ԼԵՆԻՆԱ» ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԱՐԲԻՆՆԵՐ ՑԵՌՈՒՄՈՎԻՆ ՑԵՎ ՄԱՐՓԵՆԿՈՅԻՆ

ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ

«Մենք ձեր մրցականչն ընդունեցինք և կատարեցինք։ Բերքահավաքի ամբողջ ինվենտարը մեզ վոտ վերանորոգված է։ Պլանից դուրս վերանորոգված է յերկու հնձիչ։

Հնձիչների վրա աշխատող հնձվորներն ստուգեցին վերանորոգումը և բավական մնացին ինչպես հնձիչներով, այնպես ել հատիկվորսիչներով։

Պատասխանեցեք, ինչպես ե ընթանում աշխատանքը ձեզ մոտ։

«Զեկիսս» կոլտնտեսության դարբիններ, առաջին բրիգադ՝
Պանասյուկ յեվ Բուրլակով»։

ԲԱՐԵԽԻՂՁ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԿՆՎԱՃԵՆՔ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ

Հունձն սկսվելուց առաջ Պլուժնիկովը վերադարձավ Ռոստովից և բրիգադային ժողովում ասում եր կոլտնտեսականներին.

— ՄՏ կայանի քաղսեկտորը, Յերկրհողվարչությունը և «Մոլոտի»-ի խմբագրությունն անցկացրին մեզ, «25Ս» ի բրիգադիրներիս հետ խորհրդակցություն։ Յես պատմեցի, թե ինչպես ենք մենք պատրաստվում բերքահավաքին։ Հավատացրի, վոր մենք հաջողությամբ գլուխ կբերենք բերքահավաքը և հացահանձնումը, ինչպես նշել ենք, վոր վոչ մի հատիկ չենք տա գողերին, խնայողությամբ կհավաքենք ամբողջը։

Մեր յերկրամասն անցել ե մրցման Ներքին Վոլգայի և Խարկովի մարզի հետ։

Մենք, բրիգադիրներս, մեր բրիգադների անունից հայտարարեցինք խորհրդակցությանը, վոր մրցման մեջ մենք Հյուսիսային Կովկասի համար կնվաճենք հաղթանակ և տեղ համամիութենական կարմիր տախտակի վրա։

Ամբողջ յերկրամասին մենք հայտարարեցինք.

Թող բոլոր բրիգադները վիճաբանության առարկա դարձնեն առաջավորների շարքերում գտնվելու իրա-

վունքը։ Յեվ այն բրիգադը, որն ամենքից լավ և շուտ կհավաքե հասկային ները և շարքացանները, հացը կը հանձնե պետությանը, կկատարի աշնանավարը, կանցկացնի աշնանացանը. նա, նշանակում է, կլինի առաջավոր, նրան կպատկանի Հոկտեմբերյան տոներին Ռոստով գնալու և թանկագին ընկ. Ստալինին հաղթանակի ռապորտն ստորագրելու պատիվը։

Յերբ Հյուսիսային Կովկասը մրցման կանչեց Ներքին Վոլգան և Խարկովի մարզը, թերթերում տպագրվեց հաղորդակցություններ, որ Հյուսիսային Կովկասցիների այդպիսի վճռականությունը մեծ վոգեվորություն է առաջ բերել Խորհրդային Միության բոլոր կոլտնտեսականների մեջ։

Պատասխանատու գործ է այդ մրցումը։ Մենք նրանով պիտի ցույց տանք, որ վերջնականապես ջախջախել ենք կուլակային սաբոտաժը, որը տեղի ուներ անցյալ տարի, մանավանդ Կուբանում, որ մենք կատաղի կերպով կռվում ենք կոլտնտեսային ունևոր կյանքի համար։

Յեվ հանկարծ, անսպասելի կերպով Պլուժնիկովը հարցրեց իր բրիգադին։

— Չենք խայտառակվի արդյոք մրցման մեջ։ Կպահպանենք արդյոք առաջավոր լավագույն բրիգադի կոչումը։

Դղրդաց պատասխանը.

— Կպահպանենք։

— Չենք խայտառակվի։

— Պլուժնիկովցիներ ենք մենք, թե՞ չէ։

— Ամբողջ յերկրամասը ճանաչում է մեզ, իսկ դու ասում ես՝ չենք խայտառակվի արդյոք։

Յերբ դղրդոցը խաղաղվեց, բրիգադիրը շարունակեց.

— Յերկու որից հետո գնում ենք հնձի։ Հիշեցեք, որ մենք ամենքից ավելի յենք պատասխանատու մրցման համար։ Մեր բրիգադում կուլակներ չկան։ Իսկ յեթե չկատարենք նորմաները, ցույց տանք աշխատանքի վատ որակ, դուրս չգանք աշխատանքի, խուզենք հասկերը — դա ի՞նչ է։ Դա կուլակային արգելակներ են մեր ունևոր կյանքի համար։ Յեվ թեպետ դու յերբեք էլ կուլակ չես յեղել, բայց քանի որ այդ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ИСТОРИИ ОБЩЕСТВЕННЫХ НАУК
56042-66
ՀՍՍՌ-ԱԳՄ ԳՍՊ
Ս. ԱՄ. Ա. ՄԱՏՍԱԿՅԱՆ

թույլ ես տալիս, ուրեմն անում ես կուլակային գործ։ Այնպես վոր այդպես պետք չէ վարվել և պետք է անխնա լինել դեպի նրանց, ովքեր իրենց վատ աշխատանքով ոգնում են կուլակին։

Բրիգադիրից հետո սկսեց խոսել կուսբջջի քարտուղար ընկ. Բաշտան։

Վորքան մոտենում էր հունձը, այնքան անհանգստանում էր Բաշտան։ Ամբողջ ժամանակը նա անցկացնում էր բրիգադներում, հոգ տանելով այն մասին, վորպեսզի «Զեկիստի» բոլոր բրիգադները համերաշխ, նախապատրաստված ընտանիք կազմած, դուրս գան հնձի։

Դեռ ժողովից առաջ նա ասում էր Պլուժնիկովին.

— Տես Վասիլի։ Դու վոչ միայն բրիգադիր ես, այլ և կոմունիստ։ Այն, վոր դու կվորոշես ամեն մեկի տեղը բրիգադում, դա անկասկած է։ Արդեն յերեք տարի յե, վոր բրիգադիր ես։ Բայց այս տարի առանձին հսկողություն պետք է ունենալ բերքի վրա։ Քո դիտակները հավատարիմ մարդիկ են։ Բայց պահպանությունը հասցնել այնտեղ,

վոր դա, վորպես թե ձիավոր պահապանների գործն է — չի կարելի։ Ամբողջ բրիգադը պետք է հսկի գողերին։

Այդ միտքը հայտնեց նա նաև բրիգադում.

— Մեր տրամադրությունը լավ է, բոլշևիկյան։ Այնպես վոր յես համոզված եմ, վոր Պլուժնիկովի բրիգադը սևերես չի մնա բերքահավաքին, և մանավանդ՝ սոցիալիստական բերքի պահպանության գործում։ Սեմյոն Ռոշչեպկինը, Ալեքսանդր Տիշչենկոն — փորձված կոլտնտեսականներ են, նրանք, վորպես ձիավոր պահապաններ, հիանալի կերպով կհսկեն գողերին։ Նրանց ոգնության են հասնելու պիոներները։

«Սափրիչների» վերաբերմամբ դուք արդեն արթուն հսկողություն ունեք։ Դա լավ է։ Սակայն այդ հսկողությունը պետք է պահպանել մինչև վերջ։ հսկեք ամենքդ մի մարդու պես։

Հենց նոր վերջացրեց իր խոսքը քարտուղարը, արդեն սեղանի մոտ կանգնած էր պիոներ Վասյատկան։

— Մենք, ընկեր քարտուղար, մեր պիոներական դիտակալության շնորհիվ արդեն

բռնել ենք Յոսիֆ Դոլային։ Նա փորձել եր գողություն անել մեր բրիգադի ցանքսերում։ Այդպիսիներին բոլորին ել բռնելու ենք։ Վոչ վոքի չենք խնայելու,— դիտակալորեն կորճաբար հայտարարեց Վասյա Կորիլկոն։

— Ճիշտ ես ասում, Վասյատկա, կեցցես, գովեց ներկա յեղողներից մեկը։

— Այժմ խոզողների տարին չե — լսվեց մյուս կողմից։ Ամեն կողմից ծափահարում եյին, վոգևորելով սոցիալիստական բերքի պահպանության գործում արդեն իրենց ցույց տված պատանի հարվածայիններին։

Խորհրդակցության յերկրորդ հարցը—քաղհանի համար պարգևատրման հարցն եր։ Կոլտնտեսության վարչությունը փողով և իրերով պարգևատրեց բրիգադի լավագույն հարվածայիններին։

Աննա Մալիշն առաջինն ստացավ հագուստ։ Յեվ մինչև վոր պարգևատրում եյին մնացածներին, Աննան արդեն հագել եր ստացած նոր շորերը, և ամենքը նայում եյին նրա վրա և կատակներ անում նրա հետ։

— Նյուրկա, այժմ յերևի կարկնատած շորերով չես ուզի աշխատանքի գնալ, միշտ կուզես արբշում հագնել և դեռ կսկսես պառոներդ ել ներկել։

— Կորաբ դու, Սանկա, կոլտնտեսությունը յերես կտա կնոջդ թանկագին շորերով, ըստիպված կլինես բաժանվել, — կատակում եյին աննայի մարդու հետ։

Մեծ կայտառություն եր տիրում բրիգադի կայանում։ Ուրախությունը տիրում եր բոլոր կոլտնտեսականներին, յերբ տեսնում եյին վոսկեգույն հասկերը և հաշվում իրենց աշխորերից ստացվելիք յեկամուտները։

ՀԱՎԱՔՎԱԾ Ե ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋԻՆ ՀԱՍԿԸ

Հուլիսի 13-ին Պլուժնիկովի բրիգադը միահամուռ կերպով դուրս յեկավ հնձի։ Վոչ մի խառնաշփոթություն, վոչ մի աղմուկ։ Հնձվորների ամբողջ ուշադրությունը դարձված ե նրան, վորպեսզի մանգաղը հնձի իր ամբողջ բերանով։ Հնձիչներից առաջ յեկող աղմուկը տարածվել ե ամբողջ դաշտում և Կիրպիլ գետակի վրայով հասնում ե «Դնեպրովեցի» 7-րդ բրիգադին։

— Դարձյալ պլուժնիկովցիները մեզնից առաջ սկսեցին, պետք է ուժեղացնել մեր աշխատանքի թափը,— անհանգստանալով ասում էին հարևանները։

Բրիգադիր Կրիվորուչկոն կարողացավ մրցման կրակով վառել իր բրիգադի կոլտնտեսականներին, վորոնք առաջնության համար պայքարում էին Պլուժնիկովի ամուր, ամբողջ շրջանում հայտնի բրիգադի հետ։

Նրանք աշխատում էին աչքաթող չանել Պլուժնիկովցիների վոչ մի քայլը։ Աշխատում էին հետ չմնալ և հաղթել։

Յեվ շուտով հնձիչների ճրթճրթոցով պատասխանեցին նրանք պլուժնիկովցիներին։ Բայց պլուժնիկովցիները չէին քնում։ Վորակի ակտիվիստուհի Ագրիպինա Կրիվուլյան նկատեց, վոր դիզող Յեֆրոսինյա Ումանսկայան և փոցխով հավաքող Յեֆրոսինյա Լիտովչենկոն շատ հասկեր են թողնում չհավաքած։

Նա հուզված ձայնով ասում եր նրանց.
— Վաղուց է, վոր վորոշել էինք հավաքել մինչև վերջին հասկը։ Իսկ ի՞նչ է դուրս գալիս ձեզ մոտ։ Դա աշխատանք չե։ Այդպիսի աշխատանքի համար մենք ձեզ անպատճառ տուգանքի կենթարկենք։

Լիտովչենկոն և Ումանսկայան, վորոնց վերաբերվում էին Ագրիպինայի խոսքերը, լռել էին, զգալով, վոր լավ չեն վարվել բրիգադի հետ։

Հասավ ճաշի ժամանակը։ Ինքը, բրիգադիր Պլուժնիկովն է հարցը դնում արտադրական խորհրդակցությանը։

— Վորակի ակտիվը ճիշտ է նկատողություն արել Լիտովչենկոյին և Ումանսկուն։ Առաջին անգամվա համար մենք նրանց նախազգուշացնում ենք և տուգանում յուրաքանչյուրին յերեքական աշխորով։ Չե՞ վոր յեթե նրանք, կամ մյուսն ու յերրորդն այդպես անբարեխղճորեն վերաբերվեն աշխատանքի վորակին, մենք չենք կարող մի աշխորի համար ստանալ 10-ական կիլոգրամ։ Ճիշտ չե՞մ ասում։

Ո՞ւմ կվնասենք։ Վոչ վոքի, բացի մեզնից։

Այդպիսով հենց բերքահավաքի առաջին որերից բոլոր կոլտնտեսականների ամբողջ ուշադրությունը դարձված եր աշխատանքի վորակի վրա։

Դրանից հետո բրիգադը վոչ մի անգամ ստիպված չեղավ մեկն ու մեկին նկատողություն անել աշխատանքի վատ վորակի համար։ Միշչենկո Ֆեոդորան, Կրիվուլյա Ագրիպինան և Ոսադչայա Յեվդոկիյան, վորոնք բրիգադի կողմից առաջ եյին քաշված վորակի ակտիվի մեջ, խիստ հետևում եյին և աշխատանքում ցույց տված իրենց որինակով իրենց հետևից տանում մյուսներին։

Բրիգադիր Պլուժնիկովը նախապատրաստական աշխատանքի և արտադրանքի որական նորմաների կատարման, հնձի գծագրի ստուգման միջոցով կարողացավ հասնել նրան, վոր բրիգադը բերքահավաքի մրցման մեջ ջերմ պայքար եր մղում առաջնության համար։

ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻՆ — ԼԱՎ ՍՆՈՒՆԴ

Խոշոր դեր խաղաց աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում հարվածային սնունդը։

Հնձի վայրում առաջին ճաշի ժամանակ Աննա Մալիշի խումբն առաջինն ոգտվեց

հարվածայնի սեղանից։ Խոհարարուհին նրանց տվեց մեկական կտոր յուղոտ միս։

— Վասիլի, ինչու՞ յե Նյուրկայի խումբը մսի մեծ-մեծ կտորներ ստանում։ Ի՞նչ ե, մենք չե՞նք կատարել նորման, — հուզված հարցնում եյին բրիգադիրին ուրիշ խմբերի կոլտնտեսականները։

Պլուժնիկովը մոտեցավ կանանց։

— Մի՛ հուզվեք և մի՛ գոռաք, — հանգիստ պատասխանում եր նա։ — Ահա մրցման տախտակը պարզ ցույց ե տալիս, վոր դուք միայն կատարել եք նորման, իսկ նրանք գերակատարել են։

Քանի դեռ խոսում եր Վասիլին, կոլտնտեսուհիները լուռ լսում եյին, իսկ հենց վոր նա վերջացրեց, նրանք գոռացին.

— Մեզ համար ել վաղը հարվածայնի ճաշ պատրաստեք։

— Մենք ել կգերակատարենք նորման։

Վասիլյուն մոտեցավ Ալեքսանդրա Գրիշչենկոն և ասաց.

— Իմ խմբի համար հրամայում եմ վաղը պատրաստել հարվածայնի ճաշ։ Մեկ ե, մենք Նյուրկայից առջև կանցնենք։

Հետևյալ որն այդպես էլ յեղավ։ Աշխատանքի և ճաշի ընդմիջման ժամանակ միայն տեղի ուներ հետևյալ խոսակցությունը.

— Մեր խմբում հնձիչներն աշխատում են ժամացույցի պես։ Վոչ մի անգամ կանգ չեն առել։ Հնձել են մինչև վերջին հասկը։

— Մեզ մոտ նույնպես։ Մենք արդեն կատարել ենք նորմայի կեսից ավելին։ Աշխատում ենք, վոր գերանդին հնձի իր ամբողջ բերանով։

Իսկ ավարտելով ճաշը, կոլտնտեսականներն շտապում էին դիտել մեքենաները, յուղել նրանց, ստուգել ձիասարքը և տեսնել, թե տրված կերը կերել են ամբողջապես ձիերը, թե վոչ։

Յերեկոյան, աշխատանքն ավարտելուց հետո, յուրաքանչյուրը հպարտանում եր իր որական արտադրանքով։

Հպարտացողներից առաջինն եր Մալիշը՝

— Այսոր մենք մեր խմբի հետ հնձիչների հետևը թռչենք 12 հեկտար սրածայը բադեր։ Իսկ ձե՞զ մոտ ինչպես է։

Բոլոր կոլտնտեսականները դեռ մրցման տախտակի լրացումից առաջ, այդպես էլին փոխանակվում որական աշխատանքի հաջողություններով։

Իսկ տախտակի մոտ, նայելով նրա վրա դասավորված սլաքները, խոսակցություններն ավելի էին աշխուժանում։

— Տես, Աննա Մալիշի խումբը դարձյալ յերրոպլանի վրա յե թռչում։ Ամենքից առաջ կնոտի հարվածայնի սեղանի շուրջը։

— Ամոթ ձեզ, տղամարդիկ, կանայք ձեզանից լավ են աշխատում, — կատակներ էին անում կոլտնտեսականները Յոսիֆ Տիշչենկոյի խմբի վրա։ — Նրանք յերրոպլանի վրա են թռչում, իսկ դուք ձիով։

Այդ յերկու խմբերի մրցումը հետաքրքրություն առաջ բերեց ամբողջ բրիգադի մեջ։ Դուրս յեկավ այնպես, վոր կանայք մրցում էին իրենց ամուսինների հետ։ Աննա Մալիշի խմբում էին գտնվում Տիշչենկոյի և Կրիվուլյայի կանայք։

— Այդ անիծվածներից վոչ տանը և վոչ էլ դաշտում հանգստություն չունենք, — իր հերթին Տիշչենկոյի տղամարդկանց խմբից կա-

տակում եր մեկը։ Բայց մի քիչ ել զոռենք, կհասնենք կանանց։

Աննա Մալիշի խմբում աշխատող Կրիվուլյան և Տիշչենկոն իսկապես վոր որ-որի վրա անցնում եյին մրցման մեջ առաջին շարքերը, համեմատած այն խմբի հետ, վորտեղ աշխատում եյին իրենց ամուսինները։ Հուլիսի 21-ին Պլուժնիկով գրում եր.

ԲԱՑՈՐՏ ՔԱՂԲԱԾՆԻՆ, ՀԿ(Բ)Կ ԲԱՑԿՈՄԻՆ, «ԿՈԼԽՈԶՆՈՑԵ ՉՆԵՄՑԵ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Տիմաշևսկի ՄՏ կայանի «Զեկիսա» կոլտնտեսության առաջին բրիգադը ՀԿ(բ)Կ ռայկոմի, քաղբաժնի և կուսբջիջի ղեկավարությամբ, բրիգադի ներսում ծավալված մրցման միջոցով, հուլիսի 21-ին ամբողջապես ավարտեց 399 հեկտար տարածության վրա հասկայինների բերքահավաքը։

Հնձիչներն ոգնության եյին հասնում ԿԱՖ-ին և 5-րդ բրիգադին։ Ամբողջ ուշադրությունը դարձված է կալման և հացահանձնման վրա։ Բրիգադն ամբողջապես կատարել է գարու ելեվատոր հանձնելու տարեկան առաջադրությունը։

Բրիգադիր՝ Վ. ՊԼՈՒԺՆԻԿՈՎ

Այդ ռապորտի հետ միաժամանակ կոլտնտեսային բազմատիրաժ «Նաբատը» վողջ համարը նվիրել եր Պլուժնիկովցիների հաղթանակներին։ Առաջին բրիգադի անցկացրած աշխատանքի հաջող փորձը բազմատիրաժի միջոցով տրվում եր կոլտնտեսության մնացած բրիգադներին։

Թերթը հարցը դնում եր կտրուկ կերպով.

— «Պլուժնիկովի բրիգադի հնձվորներ՝ Կուզմա Բուրլակովը յեվ Իվան Կոստենկոն հնձիչի միջոցով տալիս են 6—6 յեվ կես հեկտար։

Ինչո՞ւ յեն հետ մնում 5-րդ բրիգադի հնձվորները։ Ինչո՞ւ յեն նրանց հնձիչները տալիս չորսական հեկտար։ Իսկ չե՞ վոր բերքահավաքի սկզբում 5-րդ բրիգադի հրնձվորներ՝ Ստեփանցովն ու Բայբուզենկոն գերակատարում եյին նորմաները, «հնձիչով տալիս եյին 7-ական հեկտար»։

Պլուժնիկովցիների ձիերն ամեն որ լողանում են, Պլուժնիկովցիների ձիերն ուտում են ամբողջ տրված կերը, Պլուժնիկովցիներն ամեն յերեկո ստուգումեն, թե ով, ինչքան յեվ ինչպես ե գործ կատարել: 5-րդ բրիգադում այդ չկա: Թուլացած ե հոգը յծկանի վերաբերմամբ: Մրցման մեջ չկա պահանջվող «կրակը»:

Հինգերորդ բրիգադ, ձեզ չի կարելի հետ մնալ: Ձե՞ վոր դուք մրցում եք առաջին բրիգադի հետ: Թող չհանգչի, այլ ավելի լավ վառվի մրցման կրակը:

Հարվածայիններ Ստեփանցով յեվ Բայբուզենկո, ձեր պարտքն ե առաջին հերթին որինակ ցույց տալ:

ՄԵՆՔ ԳԻՏԵՅԻՆՔ, ԹԵ ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ ԵՆՔ ԱՇԽԱՏՈՒՄ

Պլուժնիկովի բրիգադն իսկապես վոր հաղթանակ տարավ: Այն ել ի՞նչպես: Հաճելի յեր նայել, թե ինչպես են դասավորված լավ դարսված, սանրած բարդերը: Նրանց հնձած դաշտում մեկ հատ հասկ չես գտնի:

22-ին լսեց «Դնեպրովեցի» 7-րդ բրիգադի հնձիչների ձայնը:

— Յեկեք նայելու մեր վորակը, — հրավիրեցին նրանք Պլուժնիկովցիներին:

Յեվ ճիշտ, վոր վորակով նրանք հետ չեյին մնում:

Պլուժնիկովի բրիգադում ռեկորդային արտադրանք եր տվել հնձվոր Կուզմա Բուբլակովը — 7 հեկտար: Վեցից պակաս վոչ վոք չեր տվել:

Մինչև 6,5 հեկտարի հասցրին արտադրողականությունը հնձողների վրա և «Դնեպրովեցի» 7-րդ բրիգադի հնձվորներ՝ Ոստապենկոն ու Լիպովոյը:

Լավ արտադրողականություն ցույց տվեց բարդողների խումբը, Անտա Մալիշի խմբավորությամբ: Անտան ինքը պատմում է.

— Քաղաքաժինցիներից, բՍՀից և բրիգադիրից յես իմացել եմ, վոր հացահնձման որենքը չի թույլ տալիս վոչ պակասեցում և վոչ ել հանդիպական պլան: Ինչ վոր պետք ե տալ մեկ հեկտարից, այն ել տուր բարեխիղճ կերպով պետությանը: Գիտեմ, վոր մի աշխորի համար 10 կիլոգրամ հաց ստանալը

կախված է մեզանից: Իսկ դրանից հետո հաշվում եմ հասարակ կերպով. մարդս ունի 286 աշխատ, յես ել՝ 140: Մենք յերկուսս ել հարվածայիններ ենք: Ցարեվերջին մենք յերկուսս միասին կունենանք 700 աշխատ: Դուրս է գալիս, վոր յերկուսս միասին մեր աշխատների համար կունենանք չորսհարյուր փթից ավելի հաց: Արդյոք դա մեզ համար ունևոր կյանք չե՞: Զորս հարյուր փութ, և այդ բոլորը մինչև վերջին ֆունտը մեր ընտանիքի կարիքների համար: Պետք է միայն մտածել, չե՞ վոր միայն դրանով չի վերջանում մեր յեկամուտը: Բացի այդ, մենք դեռ պետք է ստանանք փող, բանջարեղեն:

Մեր յերեխաներին տեղավորել ենք մանկահրապարակում: Մանկահրապարակն աշխատում է գիշեր ցերեկ: Յեվ յես ել մարդուս հետ աշխատում ենք հարվածայնորեն: Պայքարում ենք կոլտնտեսային ունեվոր կյանքի համար:

Հավատարմություն դեպի կոլտնտեսային գործը, խորը վստահություն դեպի հացահանձնման որենքը, աշխատանքի ամուր կազմակերպում, չթուլացող դասակարգային զգոնություն դեպի թշնամին, դաղարկապորտը, աշխատանքի նորմաները և վորակը վիժեցնողներն ու սիմուլյանտները, անձնական որինակը և պատասխանատվությունը հետ մնացող բրիգադների համար — ահա որանց մեջ է Պլուժնիկովի բրիգադի ուժը:

Այստեղ է վորակի համար մղվող պայքարի ենտուզիազմի արմատը, վորն յերևում է հազարավոր հարթ կերպով սանրած, բարեխղճորեն դարսված սրածայր բարդերի և արևածաղկի լավ լցված հատիկներով զլխիկների մեջից:

ՔԱՂԲԱԺՆԻ ՊԵՏԸ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ Է ԱՇԽԱՏԵԼ

«Դնեպրովեցի» 7-րդ բրիգադը պետք է ելևատոր տանի 800 ցենտներ հացահատիկ: Կրիվորուչկոյի կալսում չսրսուժանի կալսիչն աշխատում է որական 18-ական ժամ: Նա որական տալիս է 8-ական տոննն հացահատիկ, փոխանակ նորմայով վորոշված վեց տոննի: Հուլիսի 25-ից Կրիվորուչկոն սկսեց դիզել: Մինչև ոգոստոսի 1-ը 7-րդ բրիգադը

հանձնել է կառավարությանը ամբողջ 800 ցենտներ։ Կրիվորուչկոն այդ ամենի մասին հայտնեց պլուժնիկովցիներին։

— Մենք «Դնեպրովցիներից» հետ ենք մնացել հացահանձնման գործում։ Կրիվորուչկոն փակեց կառավարության հետ ունեցած իր հաշիվները, իսկ մենք կատարել ենք միայն տարեկան առաջադրության 60 տոկոսը։ Կալսման գործում էլ կաղում ենք։ Պետք է աշխատել, — ահազանգում է Պլուժնիկովը ճաշի ընդմիջումին։

Պլուժնիկովի բրիգադն այս տարի հարուստ բերք է հավաքում. գարի՝ մեկ հեկտարից — 25 ցենտներ, վարսակ՝ 20 ցենտներ, արևածաղիկ՝ 13 ցենտներ։ Բոլոր մրշակությունների ստացվել է հիանալի բերք։ Ճիշտ է, ցորենի բերքն այնքան էլ հաջող չէ։ Մի որվա ընթացքում Պլուժնիկովցիներն ութուժանի կալսիչի միջով անցկացնում են մինչև 11 հեկտար դեզ, իսկ կալսում են միայն մենչև 6 ուկես տոն։

Տեղի յեն ունենում տաք վիճաբանություններ։ Ծավալվում է ինքնաքննադատությունը։ Կոլտնտեսականները խոստովանում են, որ լավ ուշադրություն չեն դարձրել հացը կալսիչին տվողների աշխատանքին, որոնք միշտ էլ հավասարաչափ չէ տալիս, իսկ յերբ սայլապանը քիչ ուշացնում է հաց բերելը, կալսիչին հաց տվողներն ըստասում են, փոխանակ վերցնելու պահեստի դեզերից, որոնք բերված են դեռ իրիկվանից։

Ժողովի ամենատաք ժամանակը բրիգադային կայանն յեկավ Տիմաշևսկի ՄՏ կայանի քաղաքաժնի պետ ընկ. Կոնովկոն։ Ժողովն ավելի աշխուժացավ։

— Ճիշտ եք նկատել կալսի վիժեցման պատճառները, — ասաց նա, — պետք է անմիջապես ամրացնել խոսակցությունը գործով։

Ամբողջ բրիգադը խիստ հրահանգ տվեց կալսիչին հաց տվողներին և սայլապաններին. — հացը կալսիչին տալ այնպես, որ նա ցրվի, թափ տրվի, պառկի հարթ կերպով, և որ ելևէջորում ճաղատություն առաջ չգա։

— Վոչ մի բոպե չսպասել մինչև սայլապանները հաց հասցնեն, այլ վերցնել պահեստի դեզերից։

— Սայլապանները պետք է ավելի աշխուժորեն աշխատեն։ Պետք է վերցնեն դեզերն այնտեղ, որտեղ ցույց է տրված, այլ ոչ թե շարվեն իրար հետևից և իրար ապասեն։

Ճաշից հետո սկսեցին կալսել ուրիշ ձևով, այնպես, ինչպես ասաց քաղբաժնի պետը, ինչպես որոշեց բրիգադը։

Կալսիչի մոտ սկսեց զուբարությունն անել և ինքը ընկ. Կոնովկան։ Բարձրացնելով և գցելով հացը, նա հետևում է, որ հարթ պառկի և ցրվի և այդպես էլ սովորեցնում էր զուբարներին։

— Մ՛յ, ինչպես պետք է անել։ Լավ թափահարիր։ Այդպես ավելի լավ կանցնի թմբուկի մեջ և ավելի լավ կկալսի կալսիչը։

Զուբարներ՝ Սավինսկին և Կրիվուլյան մինչև յերեկո աշխատեցին քաղբաժնի պետի հետ միասին։ Ելեվատորի ժապավենը ճաղատություն չտեսավ, կալսիչի թմբուկն աղմկում էր հավասարաչափ, չէր թուլացնում, ինչպես առաջ, յերբ հացը թափում էին անհավասարաչափ։

— Նայեցեք, տղերք։ Հացը կցնեք այդպես մինչև կալսի վերջը, — հեռանալուց առաջ ասաց Կոնովկոն։

Իսկ զուբարներն ամուր սեղմելով հեռացող պետի և ընկերոջ ձեռքը, խոստացան նրան աշխատել այնպես, ինչպես այդ օրն աշխատել էին նրա հետ միասին։

— Պետերից, ընկ. Կոնովկո, դուք առաջինն եք, որ կանդնեցիք մեզ հետ աշխատելու և ցույց տվիք, թե ինչպես պիտի աշխատել։ Մենք մինչև մեր կյանքի վերջը չենք մոռանա այս օրը, յերբեք չենք մոռանա քաղբաժնի մեզ տված ոգնությունը, — ասում էին նրան։

ԱՄԵՆ ԻՆՉ ՀԱՇՎՎԱԾ ՅԵՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է

Ավարտելով հասկայինների հունձը և ապահովելով անխափան կալսումը, հացի փոխադրումն ու դիզումը, Պլուժնիկովը մոռացության չտվեց և մյուս աշխատանքները։

Կոլտնտեսությունների յերեք խումբը Յեվգենիա Մոլկոյի, Ալեքսանդրա Ոնիշչենկոյի և Ֆեոդորա Միշչենկոյի խմբավարությամբ արդեն ավարտել էին լուբիայի

բերքահավաքը։ Յերկու խումբն սկսել եր հավաքել արևածաղիկը։ Մեկ խումբը գնացել եր հավաքելու ճակնդեղը։

Բրիգադի արևածաղիկը վաղ հասունացող տեսակից եր, լավ քաղհանված եր և նոսրացրած, ուներ խոշոր գլուխներ։ Բրիգադիրը վորոշեց հավաքել Կուբանի ձևով— կտրել գլխիկները և շարել արևածաղկի բնի վրա։

Այդ աշխատանքները Պլուժնիկովի բրիգադը կալի հետ միաժամանակ սկսել եր ռայոնում ամենքից առաջ։ Հարվածայնորեն կատարելով շարատունկերի բերքահավաքը, բրիգադը պատրաստում եր ցանքսաշրջանառության դաշտերի 33 և 34-րդ վանդակներն աշնանացանի համար։ Իսկ դարբնոցում այդ ժամանակ արդեն ավարտված եր ցանիչների վերանորոգումը։

ՁԻՈՒՆ ՅՈՒՅՑ Ե ՏՐՎԱԾ ԼԱՎ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Պլուժնիկովի բրիգադում կան 60 հոգի տարիքավոր տղամարդիկ և կանայք և 15 տարեկան չորս պատանի։

Բրիգադն ունի մշտական ամրացված հողամաս։ Այդ հողամասում նա կատարում է բոլոր աշխատանքները և ամբողջապես պատասխանատու է այդ հողամասից ստացվող բերքի համար։

Բրիգադի ձիերն ու ինվենտարն ամրացված են վորոշ կոլտնտեսականների։ Բրիգադային արտադրական պլանին կցված է մի ցուցակ, վորի մեջ գրված են բոլոր ձիերն իրենց անուններով, ինվենտարն իր համարներով, նույնպես և ձիաշարքը։ Ամեն մի կոլտնտեսական, վորին ամրացված է է այդ բոլորը, ստորագրում է այդ ցուցակի տակը։

Բրիգադային գոմում միջանցիկ քամիներ չեն լինում։ Այնտեղ մաքուր է և չոր։ Յուրաքանչյուր ձիու համար կա առանձին տեղ։ Գոմն ունի էլեկտրական լուսավորություն։ Գոմը գտնվում է բրիգադային գրասենյակի կողքին։ Այնտեղ կա յերեք սենյակ բրիգադիրի և հաշվարարի, ձիասարքային աշխատանքների համար և մի նախասենյակ գիշերային ձիապանների համար։ Նախասենյակի դուռը բացվում է դեպի գոմը։

Գոմի մոտ գտնվում է ջրհորը, վորից ջրում են ձիերին։ Ջուրը թափվում է մաքուր տաշտի մեջ։ Ինվենտարը թափթփված չէ և կարգին կերպով կախված է ծածկի տակ։

Բրիգադում ձիուն ցույց է տրվում լավ հոգատարություն։ Պլուժնիկովցիների ձիերի սմբակները չեն փտում, միշ մաքուր են։ Կերը և ջուրը տրվում են ժամանակին։ Ձիերին ցույց է տրվում լավ վերաբերմունք։

Բրիգադն ունի անցյալ տարվա ձիերից 14 հատ։ Նա պահպանում և մեծացնում է մատղաշներին, բազմացնում է ձիերի սերունդը։

Ահա, որինակի համար, Գրիշչենկո Պյոտրը, Ալեքսանդր Մալիշը։ Լուսաբացին նրանք արդեն ձիերի մոտ են։ Նրանց կանոնն այն է, վոր ձին ամբողջապես ուտի տված կերը։ Նրանք յերբեք չեն մոռանում յուղել մեքենան, նայել ձիասարքը, վորպեսզի չմաշվի, գործը չկանգնի, ուրեմն և ճեղքվածք չլինի։

Նույնիսկ յերբորդ բրիգադի բրիգադիր Ժուրկովսկին ել հաստատում է. — շատ ժիր և մարտունակ տղերք են քո տղերքը, Վասիլի, — և ավելացնում է.

— Բայց սպասիր. մի քիչ ել, և մրցման մեջ քո բրիգադին կհաղթենք։ Յեվ ի՞նչպես չհաղթենք, յերբ քո մարտունակ տղերքի դիմաց կան մերոնք։ Վերցրու, որինակի համար, Վասիլի Լեվադային։ Նա հիսուն տարեկան է, բայց քո յերիտասարդների առաջ անձնատուր չի լինի։ Հենց վոր լույսը բացվում է, նա արդեն ձիերի մոտ է, նայում է մեքենաները, շփում է նրանց՝ ինչպես հոգատար բժիշկը հիվանդին։ Իսկ աշխատանքի ժամանակ նա միշտ գերակատարում է իր նորման։ Ամենից շատ է աշխատում։

Հարվածային աշխատանքով վառելով մյուսներին, մրցելով իրար հետ, Պլուժնիկովի բրիգադի կոլտնտեսականները հաստատ քայլերով առաջ են գնում, վորպես առաջավոր ողակ, կոլտնտեսային ունևոր կյանքի համար պայքարում։

ՀԱՂԹԱՆԱԿԻ «ԳԱՂՏՆԻՔԸ»

Պլուժնիկովի բրիգադում կա մեկ կուսակցական — դա ինքը՝ բրիգադիրն է, և յերկու թեկնածու։ Քանակով մեծ չի կուսակ-

ցական կազմը, բայց նրա ուժը նրանումն է, որ կոմունիստներն որինակ են աշխատանքում։

Լագոյդան — հարվածային է։ Նա նույնպես փոխառության տարածման ոժկոմի նախագահն է։ Ոժկոմը նրա ղեկավարությամբ յուրաքանչյուր կոլտնտեսականի հետ տարած իր անհատական աշխատանքով հասավ նրան, որ բրիգադը գերակատարում էր կոլտնտեսության փոխառության առաջադրությունը և արդեն մոտ 3 հազար ռուբլի (90 տոկոս) վճարել է տոմսերի համար։

Տիշչենկոն հարվածային է։ Նա վարում է նաև զրադարանային աշխատանքը։ Կազմակերպում է թերթերի, ժուրնալների բարձրաձայն ընթերցումներ։ Նրան հաջողվել է այն, որ բրիգադում չկա մի ընտանիք, որը թերթ չստանա։ Բրիգադի կոլտնտեսականները բաժանորդագրվել են — 40 որինակ ռայոնական թերթի, 20 որինակ՝ յերկրային «Կոլխոզնայա Պրավդա» թերթին, 10 որինակ՝ «Մոլոտ», 10 որինակ՝ «Կրեստյանսկայա գազետա» և մի քանի ժուրնալների։

Կոմունիստ բրիգադիրի ուժն առաջին հերթին կայանում է նրանում,, որ նա քաղաքաժնի փորձված ղեկավարությամբ, ուժերի պարզ դասավորությամբ, լայն ծավալված կուս-մասսայական աշխատանքով կազմել էր իր շուրջը բրիգադում անկուսակցական կոլտնտեսային ակտիվ։

Կոլտնտեսուհիներ՝ Աննա Մալիշը, Յեվգենյա Մոլկոն, Ալեքսանդրա Ոնիշչենկոն, Ֆեոդոսյա Միշչենկոն, Նատալյա Վորոնը — բրիգադիրի առաջին ոգնականներն են։ Բոլոր վեցն էլ կանանց խմբակի մշտական խմբավարներն են։ Նրանցից յուրաքանչյուրը հանդիսանում է իր խմբի իսկական առաջնորդը։ Այդ խմբերն աշխատանքից աշխատանքի յեն անցնում չցրվելով։ Ամբողջ տարվա ընթացքում, որպես կանոն, նրանք մնում են նույն կազմով։ Կոլտնտեսուհիներից յուրաքանչյուրը ճանաչում է իր խմբավարին և աշխատում է նրա ղեկավարությամբ։

Ամեն մեկն առաջուց գիտե իր տեղը և առաջադրությունը։ Այդ առանձնապես լավ գիտեն խմբավարները։

Նախքան վորևե աշխատանք սկսելը, բրիգադիրը պարզ կերպով բացատրում է խմբավարներին աշխատանքի սկիզբն ու վերջը։ Այդպիսով աշխատանքի ընթացքում խմբավարներն իրենց հողամասերում հանդիսանում են, վորոշ չափով, վորպես իրենց խմբերի բրիգադիրները։ Բրիգադիրին են ճանաչում առաջին հերթին կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները։

Խիստ պլանավորումը, պլանի կատարման կողմն ուղղված մրցումը, կատարման ըստուգումը, ամբողջ ակտիվի կողմից բրիգադիրին ցույց տրված ոգնությունը — ահա վորոնց մեջ է թագնված Պլուժնիկովի բրիգադի հաղթանակի «գաղտնիքը», ահա գիտակից աշխատանքային կարգապահության ամման աղբյուրը։

Մատնանշենք հետևյալ փաստը.

Հիվանդացավ կոլտնտեսուհի Մատրյոնա Սկիբալի յերեխան։ Պետք է տանել բժշկի մոտ։ Պետք է տանել առավոտը։ Առավոտյան ժամի 10-ին Սկիբան գալիս է Պլուժնիկովի մոտ և ասում է.

— Վասյա, թույլ տուր տանել հիվանդ աղջկադ։ Յես ուզում եյի առանց թույլատվության տանել, բայց այնքան ել հարմար չեր։ Յես առավոտը շուտ վերկացա և գնացի խումբը, վերջացրի գործերս, պայմանավորվեցի խմբի հետ և յեկա մոտդ։ Յես շուտ կվերադառնամ և կգնամ խումբը։

Ահա դեպի աշխատանքն ունեցած այդ ազնիվ վերաբերմունքում, — յերբ կոլտնտեսայինը դրվում է առաջին պլանում, յերբ կոլտնտեսականն զգում է պատասխանատվություն իր ստանձնած աշխատանքի համար, — գտնվում են Պլուժնիկովի բրիգադի հաջողությունները։

Այդ պատճառով է, վոր կոլտնտեսության մեջ Պլուժնիկովի բրիգադն ունի լավագույն ցուցանիշներ, աշխատանքի բարձր արտադրողականություն։

Յեթե կոլտնտեսությունում ցանքսի միջին նորման մեկ ցանիչի համար 4,8 հեկտար եր, ապա Պլուժնիկովի բրիգադում միջին արտադրանքը 5 հեկտար եր։ Այնպես ել համապատասխան մյուս աշխատանքները — կուլտիվացիան (մշակումը) կոլտնտեսությունում 2 հեկտար եր, իսկ բրիգա-

դում — 2,35 հեկտար։ Հունձը կոլտնտեսությունում — 5,3 հեկտար եր, բրիգադում — 6,2 հեկտար։ Լուբիայի բերքահավաքը կոլտնտեսությունում — 0,10 հեկտար եր, բրիգադում — 0,12 և այլն։

Պլուժնիկովի լծկանները տալիս են ամենաբարձր արտադրականությունը։

Տափանումը, պլանով նախատեսված որական 2 հեկտարի փոխարեն, արվում եր 2,5 հեկտար։ Վարը վոչ թե 1,5 հեկտար, այլ՝ 1,7 — 1,8 հեկտար։ Ցանքսը՝ փոխանակ որական 5 հեկտարի, արվում եր 6,5 — 7 հեկտար։ Յեվ այդպես բոլոր աշխատանքներում։

Այդպիսի պայմաններում բրիգադին հաջողվեց ճիշտ պլանային ժամկետին ավարտել ցանքսի և քաղհանի բոլոր աշխատանքները։ Կատարելով բերքահավաքի աշխատանքները, բրիգադը միաժամանակ ոգնություն ե հասնում մյուս բրիգադներին, բացի այդ, տալով 5 հոգու և լծկանի մի մասը խոզերի խորհտնտեսությունում աշխատելու համար։

Բրիգադիր Պլուժնիկովը կարողացավ կոլ-

տնտեսականների մեջ պատասխանատվության զգացմունք առաջացնել՝ ամբողջ կոլտնտեսության մրցող բրիգադների աշխատանքի հաջողության համար։

Տալով իրենց առաջավոր փորձն ուրիշ բրիգադներին, պլուժնիկովցիները զինում են նրանց բոլշևիկյան կոլտնտեսությունների, կոլտնտեսային ունևոր կյանքի համար պայքարելու։

Նրանք վորոշեցին իրենց բերքահավաքի պլանը հրապարակել ռայոնական թերթում։ Հրապարակեցին, և շուտով «Դնեպրովեց» կոլտնտեսության 5-րդ բրիգադի բրիգադիր ընկ. Կիրյանովից ստացան հետևյալ պատասխանը.

— Ընկեր պլուժնիկովցիներ, ձեր պլանը յես դրել եմ սեղանիս վրա և, նայելով նրա վրա, կազմել եմ իմ բրիգադի պլանը։

Ձեր պլանն ինձ համար հանդիսացավ վորպես սեղանի վիրք։ Նա ինձ շատ ոգնեց։

Հենվելով իր ակտիվի վրա, կոմունիստ — բրիգադիր Պլուժնիկովը, կոլտնտեսային բջիջի և ՄՏԿայանի քաղբաժնի ղեկավարությամբ, իր և մյուս բրիգադներին տա-

Նում է պայքարելու աշխարհի բարձր յեկամտի, կոլտնտեսային հասարակարգի հետագա հաղթանակների, ամբողջ աշխարհի աշխատավորների սիրելի առաջնորդ ընկ. Ստալինին հաղթական Հոկտեմբերյան ռապորտն ստորագրելու մեծ պատվի համար:

ՊԵՏ ԳԱՆ ՀՐ-ԳԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Արա ССР
Ս. ՍՅՈՒՆԻՆ ՄԵՆԱՆ
Ս. им А. Мясниняна

Отв. по выпуску А. Г. АВАКЬЯН Тех. ред. Г. М. Маркарьян

Сдано в набор 19-X-1933 г. Уполкрайлит № В—325
Партиздат. Р. н-Д. Издан. 504. Об'ем 1½ печ. листа.
Формат бумаги 165x148—1/32. Зак з 5197. Тираж 2000 экз.
Подписано в печ. 28-X-1933 г

Типография им. „Стачки 1902 года" СКПТ в г. Ростове на Дону

«Ազգային գրադարան»
NL0209908

30.784

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.
Цена 25 коп.

34-
Са 57

1 ЯНВ 1934

На армянском языке

М. Скоморохов

БРИГАДА ПЛУЖНИКОВА В БОРЬБЕ ЗА ПОБЕДНЫЙ ОКТЯБРЬСКИЙ РАПОРТ

ПАРТИЗДАТ
Ростов на-Дону